



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ՄԱԱԶՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



ԲԱՐԵԿԵՆՊԱՆ ՎԱՐԱԳԱՅ ԽԱՁԻ ՊԱՀՈՅ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (14.3-17)

Այն օրը Տէրը վերջ պիտի դնէ քու գաւերուդ, նեղութիւններուդ եւ գերութեան անտանելի ծառայութեանդ, եւ պիտի հանգստացնէ քեզ: Այն օրը հետեւեալ ողբանման առակը պիտի կարդաս Բաբելոնի թագաւորին վրայ, ըսելով.-

«Ինչպէ՞ս կորսուեցաւ բռնաւորը, ինչպէ՞ս կորսուեցաւ աշխարհը ցնցողը: Ահաւասիկ Տէրը խորտակեց մեղաւորներուն լուծը, լուծը իշխաններուն, եւ անխնայ եղաւ անոր հանդէպ՝ որ կատաղի մոլեգնութեամբ եւ անտանելի տանջանքներով ազգերը կը կոտորէր: Ամբողջ աշխարհը խաղաղեցաւ եւ հանգստացաւ. մարդիկ ուրախութեամբ կ'աղաղակեն: Լիբանանի եղեւիններն ու մայրիներն ալ կը ցնծան եւ կ'ըսեն. «Այն օրէն որ դուն կորսուեցար՝ ոեւէ փայտահատ չեկաւ մեզ կտրելու»: Դժոխքն իսկ տակնուվրայ եղաւ, երբ դուն հոն իջար. միանգամայն ելան կանգնեցան աշխարհակալ բոլոր հսկաները, որոնք ազգերու թագաւորները իրենց աթոռներէն վար ձգած էին: Բոլորը միասին ըսին քեզի. «Դո՛ւն ալ մեզի պէս բռնուեցար եւ մեր վիճակին ինկար: Քո՛ւ ալ փառքդ

գերեզման իջաւ եւ ուրախութիւնդ թաղուեցաւ: Այսուհետեւ ցեցերը քեզի ներքնակ պիտի ըլլան, իսկ որդերը՝ վերմակ»:

Ինչպէ՞ս ինկար երկինքէն, ո՛վ Արուսեակ, որ առաւօտուն կը ծագէիր. ինչպէ՞ս գետինն հաւասարեցար, դուն՝ որ բոլոր ազգերը ոտքի տակ առած էիր: Մտքէդ կ'ըսէիր. «երկինք պիտի ելլեմ. բոլոր աստղերէն վեր պիտի հաստատեմ աթոռս, պիտի նստիմ հիւսիսի այն բարձր լեռան վրայ որ աստուածներու ժողովատեղին է. ամպերէն աւելի վեր պիտի բարձրանամ եւ Բարձրեալին պիտի նմանիմ»: Բայց ահա դժոխք իջար, երկրի ընդերքը: Քեզ տեսնողները պիտի զարմանան եւ ըսեն. «Սա՞ է այն մարդը որ աշխարհը կը դողացնէր եւ թագաւորները կը տապալէր. ան՝ որ ամբողջ աշխարհը աւերակի կը վերածէր, քաղաքները կը քանդէր եւ իր գերիները բնաւ իրենց տունները չէր դարձրներ»»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԳ ՆԱՄԱԿԷՆ (10.18-11.10)

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի: Սակայն, յուսամ քիչ մը ներողամիտ կ'ըլլաք եթէ անմտօրէն ես ալ պարծենամ, ըրածներս յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ լսեցէք: Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախան-

ձախնդրուլթեամբ լեցուած՝ կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: Կը վախնամ որ նոյնքան դիւրութեամբ ընդունիք ոեւէ մէկը որ մեր քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած Հոգիէն տարբեր հոգի մը, կամ ձեր ընդունած Աւետարանէն տարբեր աւետարան մը կը քարոզէ ձեզի:

Ձեմ գիտեր թէ ես ձեր այդ նշանաւոր “առաքեալ”ներէն բանով մը ետ կը մնա՞մ: Թէպէտ ճարտար խօսող մը չեմ, բայց խօսածս գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի ձեզի ամէն ինչով: Արդեօք սխալ ըրի որ Աստուծոյ Աւետարանը ձրիօրէն քարոզեցի ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ բարձրացնելու համար: Ձեւով մը միւս եկեղեցիները կողոպտեցի, ապրուստս անոնցմէ առնելով, որպէսզի ձեզի ծառայեմ ձրիօրէն: Ձեր քով եղած ատենս նոյնիսկ երբ կարիքի մէջ եղայ՝ ձեզմէ ոեւէ մէկուն բռն չեղայ. Մակեդոնիայէն եկած եղբայրները հոգացին պէտքերս: Եւ ինչպէս անցեալին զգուշացայ, ասկէ վերջ եւս ամէն կերպով պիտի զգուշանամ ձեզի բռն ըլլալէ: Բայց Քրիստոսի ճշմարտութեամբը, որ իմ ներսիդիս է, կ'ըսեմ՝ թէ այս բաներով պիտի պարծենամ ամբողջ Ա. քայիայի մէջ, բոլորին պատմելով:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(10.1-12)

Յիսուս Կափառնայումէն Հրէաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն

բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցաւ, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ոեւէ մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»: Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

ՀՈԳԵԼԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈՒ
ՆԱԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷԷ ԿՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՆ
514 331 5445 x202 ԹԻԻՒՆ

ՀԻԲԱՆԴԱԵՐՈՒՄ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քինյ. Գոյունեանի.
514 909 5203 քիփն: